ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«29» ապրիլի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՊԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Պարարվեստի հարգարժա՛ն ներկայացուցիչներ

Շնորհավորում եմ Պարի միջազգային օրվա առթիվ:

Պարը եղել և մնում է ժողովրդի աշխարհայացքի և գեղագիտական մտածողության ամենավառ դրևորումներից մեկը և արտացոլում է մշակութային առանձնահատկությունները, աշխարհի ու կյանքի հանդեպ ունեցած մարդու վերաբերմունքը:

Ազգային պարը նաև ժողովրդի պատմության, կենսակերպի ու ավանդույթների, երազանքների ու նվաճումների ամբողջացումն է:

Ստեփանավանում գործունեություն ծավալող պարարվեստի հարգելի գործիչներ, շնորհակալ ենք ձեզ՝ ձեր նվիրյալ աշխատանքի համար, որով դուք պահպանում, զարգացնում և սերունդներին եք փոխանցում մեր ազգային պարի հարուստ ժառանգությունը:

Մաղթում եմ հաջողություններ, նորանոր նվաճումներ, պարարվեստը գնահատող լեփ-լեցուն դահլիճներ և արժանի գնահատանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ